

## ԶԵԿՈՅՑ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

### ՉՐԱԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը պատիւ ունի հրաւիրելու Միութեան բոլոր իրաւասու անգամները ներկայ գտնուելու 56րդ Ընդհ. Ժողովին, որ պիտի գումարուի Շարաք օր, 6 Դեկտեմբեր 1969, առաւօտեան ժամը 9-30ին, Միութեան Կեդրոնական Գրասենեակին մէջ, 109 Խաք 40րդ Փողոց, Նիւ Ետք, Ն. Ե.:

Եթէ օրինական մեծամասնութիւն մը ներկայ չըլլայ վերոյիշեալ թուականին, այս ծանուցումը պիտի նկատուի իբրեւ երկրորդ հրաւեր Ընդհանուր Ժողովի, որ պիտի գումարուի ՇԱԲԱԹ և ԿԻՐԱԿԻ, 13 և 14 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1969, առաւօտեան ժամը 9-30ին, Առաջնորդարանի Կիւլլապի Կիւլլեկեան Մշակութային Կեդրոնին մէջ, 630 Սէֆընտ Էվընի, Ն. Ե. 10016:

Այն բոլոր իրաւասու անգամները որ ներկայ պիտի ըլլան այս ժողովին, օրինական մեծամասնութիւն պիտի կազմեն:

#### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ընդհանուր Տեղեկագիր 1968 Տարեշրջանի:
2. Ընդհանուր Հաշուետուութիւն 1968 Տարեշրջանի:
3. Ընտրութիւն Կեդր. Վարչ. Ժողովի՝ իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտած անդամներու տեղ:
4. Կանոնադրի Բարեփոխութիւն:
5. Առաջարկներ եւ Թելազրութիւններ:
6. Գնահատանքի Բանաձեւեր:

Ի ԳԻՄԱՑ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Ատեճազպիր

Ատեճապետ

Բ. Գ. ԿԻԷԿԸՐԻ

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նիւ Ետք, 1 Օգոստոս 1969